ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 15.02.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ

թիվ ՍՑ-ԷՍ-2019/21

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 25.01.2019թ. թիվ 27/26-3/997-19 գրությամբ «ՄԱԴԷԼ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 16.01.2019թ. թիվ ԴՎԱ/229 գրության հիման վրա, 25.01.2019թ. «ՄԱԴԷԼ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

2. **<u>ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

ՀՀ պաշտպանության նախարարությունը 16.01.2019թ. թիվ ԴՎԱ/229 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Հիմք ընդունելով ՀՀ պաշտպանության նախարարության և «ՄԱԴԷԼ» ՍՊԸ-ի միջև 15.06.2018թ. կնքված N ԲՄԱՊՁԲ-7/32-1 ծածկագրով պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետը՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2019թ. հունվարի 11-ից միակողմանի ամբողջությամբ լուծել է N ԲՄԱՊՁԲ-7/32-1 պայմանագիրը:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ վերոնշյալ պայմանագրի լուծման վերաբերյալ գրությունը 15.01.2019թ. հրապարակվել է www.gnumner.am կայքում»:

ՀՀ պաշտպանության նախարարությունը պատշաճ ծանուցվել է Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն նախարարության կողմից լիազորված որևէ ներկայացուցիչ չի ներկայացել:

3. **<u>«ՄԱԴԷԼ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

«ՄԱԴԷԼ» ՍՊԸ-ն 04.02.2019թ. գրությամբ Բողոքներ քննող անձին հայտնել է հետևյալը.

«ՀՀ պաշտպանության նախարարության և «ՄԱԴԷԼ» ՍՊԸ-ի միջև 15.06.2018թ. կնքված N ԲՄԱՊՁԲ-7/32-1 ծածկագրով պայմանագրի համաձայն, մենք պետք է մատակարարեինք վերնաշապիկներ: Ըստ պայմանագրի մատակարարումը պետք է կատարվեր 2018թ. հուլիս ամսին, որը նշված է տեխնիկական բնութագրում: Սակայն մատակարարումից առնվազն երկու ամիս առաջ պատվիրատուն պետք է ներկայացներ քանակները ըստ չափսերի, որը ամրագրված է պայմանագրի տեխնիկական բնութագրում: Սակայն մեզ պատվիրատուի կողմից չի տրամադրվել քանակները ըստ չափսերի: Նշվածի վերաբերյալ մենք 2018թ. օգոստոսի 16-ին դիմել ենք ՀՀ պաշտպանության նախարարության չափսեր տրամադրելու համար, սակայն պատասխան չենք ստացել: Այդ պատճառով էլ մեր կողմից մատակարարում չի իրականացվել:»:

«ՄԱԴԷԼ» ՍՊԸ-ն պատշաճ ծանուցվել է Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն Ընկերության կողմից լիազորված որևէ ներկայացուցիչ չի ներկայացել:

4. <u>ՍՑ-ԷՍ-2019/21 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Բողոքներ քննող անձն ուսումնասիրել է ՀՀ ֆինանսների նախարարության 25.01.2019թ. թիվ 27/26-3/997-19 գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 16.01.2019թ. թիվ ԴՎԱ/229 գրությունը և կից փաստաթղթերը, ՀՀ պաշտպանության նախարարության և «ՄԱԴԷԼ» ՍՊԸ-ի միջև 15.06.2018թ. կնքված N ԲՄԱՊՁԲ-7/32-1 ծածկագրով պայմանագիրը, Պատվիրատուի կողմից 14.01.2019թ. «ՄԱԴԷԼ» ՍՊԸ-ին ուղղված թիվ ԴՎԱ/94 գրությունը, ՀՀ ՋՈՒ ԹԻԿՈՒՆՔԻ վարչության պետի կողմից ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալին 17.12.2018թ. ուղղված գրությունը.

ՀՀ պաշտպանության նախարարության և «ՄԱԴԷԼ» ՍՊԸ-ի միջև 15.06.2018թ. կնքվել է N ԲՄԱՊՁԲ-7/32-1 ծածկագրով պայմանագիր (այսուհետ՝ նաև Պայմանագիր):

Պայմանագրի՝

- 1.1 կետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է նույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով՝ Գնորդին մատակարարել պայմանագրի N1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքներ (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ ապրանքը և վճարել դրա համար:
- 2.1.1 կետի համաձայն՝ Գնորդն իրավունք ունի ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետը խախտվել է 30 օրից ավելի:
- 2.1.7 կետի համաձայն՝ Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է Պայմանագիրը:

- 2.1.7.1 կետի «բ» ենթակետի համաձայն՝ Վաճառողի կողմից Պայմանագիրը խախտելը էական է համարվում, եթե ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի:
- 8.1 կետի համաձայն՝ պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:
- 8.9 կետի համաձայն՝ Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն, հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, նույն կետում նշված կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից:
- թիվ 1 հավելվածի համաձայն՝ Ընկերությունը պարտավորվել է 2018թ. հուլիս ամսին մատակարարել թվով 15 հատ վերնաշապիկ երկարաթև, սպիտակ գույնի, գեներալական, թվով 40 հատ վերնաշապիկ երկարաթև, դեղնականաչավուն գույնի, գեներալական, թվով 40 հատ վերնաշապիկ կարճաթև, դեղնականաչավուն գույնի, գեներալական:
- տեխնիկական բնութագրով սահմանվել է, որ չափսերի քանակները տրամադրվում են պատվիրատուի կողմից, մատակարարումից առվազն երկու ամիս առաջ:

«ՄԱԴԷԼ» ՍՊԸ-ն 16.08.2018թ. Պատվիրատուի a.grigoryan@mil.am էլ. փոստի հասցեի ուղարկված գրությամբ հայտնել է հետևյալը.

«Ն ԲՄԱՊՁԲ-7/32-1 ծածկագրով գնման պայմանագրի համաձայն, մենք պետք է մատակարարենք վերնաշապիկներ: Ըստ պայմանագրի մատակարարումը պետք է կատարվեր 2018թ. հուլիս ամսին, որը նշված է տեխնիկական բնութագրում: Սակայն մատակարարումից առնվազն երկու ամիս առաջ պատվիրատուն պետք է ներկայացներ քանակները ըստ չափսերի, որը մինչ օրս չի տրամադրվել: Քանի որ ժամկետները շատ սուղ են, ուստի խնդրում ենք հնարավորինս արագ տրամադրել քանակները ըստ չափսերի կամ տրամադրել ստորաբաժանման հեռախոսահամար, ովքեր իրավասու են կամ պետք է տրամադրեն վերը նշվածը:»:

ՀՀ ԶՈՒ ԹԻԿՈՒՆՔԻ վարչության պետը 17.12.2018թ. գրությամբ ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալին հայտնել է հետևյալը.

«Ձեզ եմ ներկայացնում նյութական միջոցների մատակարարման գործընթացում թերացած «ՄԱԴԷԼ» ՍՊԸ-ի հետ կնքված պայմանագիրը, որը ենթակա է միակողմանի լուծման, համաձայն պայմանագրի՝ 2-րդ կետի 2.1 ենթակետի «Գնորդն իրավունք ունի» 2.1.1 կետով սահմանված «Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետը խախտվել է 30 օրից ավելի, ընդ որում՝

15.06.2018թ. N ԲՄԱՊՁԲ-7/32-1

- վերնաշապիկ երկարաթև, սպիտակ (գեներալական) – 15 հատ

- վերնաշապիկ երկարաթև (գեներալական) – 40 հատ

- վերնաշապիկ կարճաթև (գեներալական) – 40 հատ»:

ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱ վարչության պետը 25.12.2018թ. ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալին ներկայացված զեկուցագրով հայտնել է հետևյալը.

«Զեկուցում եմ Ձեզ, որ ՀՀ ԶՈՒ ԹԻԿՈՒՆՔԻ վարչության կողմից առաջարկվել է, հիմք ընդունելով ՀՀ պաշտպանության նախարարության և «ՄԱԴԷԼ» ՍՊԸ-ի միջև կնքված N ԲՄԱՊՁԲ-7/32-1 ծածկագրով պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետի պահանջները (խախտվել է ապրանքների մատակարարման ժամկետը), սկսել միակողմանի լուծման գործընթաց՝ 15 հատ վերնաշապիկ երկարաթև, սպիտակ (գեներալական), 40 հատ վերնաշապիկ երկարաթև (գեներալական), 40 հատ վերնաշապիկ կարճաթև (գեներալական) մասով:

Ելնելով վերոգրյալից առաջարկում եմ հանձնարարել ՀՀ պաշտպանության նախարարության ԳՓՁ վարչությանը՝ «ՄԱԴԷԼ» ՍՊԸ-ի միջև կնքված վերոհիշյալ ծածկագրով պայմանագիրը նշված ապրանքատեսակների մասով միակողմանի լուծել 17.12.2018թ. դրությամբ:»:

ՀՀ պաշտպանության նախարարությունը 14.01.2019թ. թիվ ԴՎԱ/94 գրությամբ «ՄԱԴԷԼ» ՍՊԸ-ին հայտնել է հետևյալը.

«ՀՀ պաշտպանության նախարարության և «ՄԱԴԷԼ» ՍՊԸ-ի միջև 15.06.2018թ. կնքված N ԲՄԱՊՁԲ-7/32-1 ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ նաև Պայմանագիր)

շրջանակներում Ձեր Ընկերությունը համապատասխանաբար 2018թ. հուլիս ամսին պետք է մատակարարեր 15 հատ վերնաշապիկ՝ երկարաթև, սպիտակ գույնի, գեներալական, 40 հատ վերնաշապիկ երկարաթև, դեղնականաչավուն գույնի, գեներալական, 40 հատ վերնաշապիկ կարճաթև, դեղնականաչավուն գույնի, գեներալական, սակայն մինչ օրս մատակարարումներ չեն իրականացվել:

Հիմք ընդունելով վերոնշյալ պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետը՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2019թ. հունվարի 11-ից միակողմանի ամբողջությամբ լուծում է ԲՄԱՊՁԲ-7/32-1 ծածկագրով պայմանագիրը:

Տեղեկացնում եմ, որ «ՄԱԴԷԼ» ՍՊԸ-ն պարտավոր է նույն ծանուցումը սանալուց հետո հինգ բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005028106 հաշվեհամարին փոխանցել 31595.1 ՀՀ դրամ որպես տույժ Պայմանագրի 6.2 կետի համաձայն, ինչպես նաև վերոնշյալ ժամկետում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005000758 հաշվեհամարին ենթակա է գանձնման 45.790 ՀՀ դրամ որպես տուգանք՝ Պայմանագրի կատարման ապահովում (Պայմանագրի ընդհանուր գումարի 10%):»:

Միաժամանակ ՀՀ պաշտպանության նախարարությունը N ԲՄԱՊՁԲ-7/32-1 ծածկագրով գնման պայմանագիրը լուծելու մասին հայտարարությունը 15.01.2019թ. հրապարակել է www.procurement.am կայքում:

«ՄԱԴԷԼ» ՍՊԸ-ն Բողոքներ քննող անձին 04.02.2019թ. ներկայացված գրությամբ հայտնել է, որ N ԲՄԱՊՁԲ-7/32-1 ծածկագրով պայմանագրի համաձայն, Ընկերությունը 2018թ. հուլիս ամսին պետք է մատակարարեր վերնաշապիկներ: Ըստ Պայմանագրի մատակարարումից առնվազն երկու ամիս առաջ Պատվիրատուն պետք է ներկայացներ քանակները ըստ չափսերի, որը ամրագրված է պայմանագրի տեխնիկական բնութագրում, սակայն Պատվիրատուի կողմից քանակները ըստ չափսերի չի տրամադրվել և այդ իսկ պատճառով էլ Ընկերության կողմից մատակարարում չի իրականացվել:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Գնումների մասին» ՀՀ օրենքի՝ 2-րդ հոդվածի՝ 23-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացը գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջությունն է, ներառյալ գնումների պլանավորումը, գնման առարկայի բնութագրերի հաստատումը, պայմանագրի կատարումը և կառավարումը:

- 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

- 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների բողոքարկման խորհրդում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

- ՀՀ պաշտպանության նախարարության և «ՄԱԴԷԼ» ՍՊԸ-ի միջև 15.06.2018թ. կնքվել է N ԲՄԱՊՁԲ-7/32-1 ծածկագրով պայմանագիր:

- Պայմանագրով Ընկերությունը պարտավորվել է 2018թ. հուլիս ամսին մատակարարել թվով 15 հատ վերնաշապիկ երկարաթև, սպիտակ գույնի, գեներալական,

թվով 40 հատ վերնաշապիկ երկարաթև, դեղնականաչավուն գույնի, գեներալական, թվով 40 հատ վերնաշապիկ կարճաթև, դեղնականաչավուն գույնի, գեներալական:

- N ԲՄԱՊՁԲ-7/32-1 ծածկագրով պայմանագրի տեխնիկական բնութագիր թիվ 1 հավելվածի համաձայն՝ չափսերի քանակները տրամադրվում են պատվիրատուի կողմից մատակարարումից առվազն երկու ամիս առաջ:
- «ՄԱԴԷԼ» ՍՊԸ-ն 16.08.2018թ. Պատվիրատուի a.grigoryan@mil.am էլ. փոստի հասցեի ուղարկված գրությամբ խնդրել է տրամադրել մատակարարման ենթակա ապրանքների քանակները՝ ըստ չափսերի:
- Նախաձեռնված ընթացակարգի հիմքերում բացակայում է որևէ ապացույց այն մասին, որ Պատվիրատուն «ՄԱԴԷԼ» ՍՊԸ-ին Պայմանագրի տեխնիկական բնութագիր՝ թիվ 1 հավելվածի համաձայն՝ առվազն երկու ամիս առաջ տրամադրել է մատակարարման ենթակա վերնաշապիկների քանակները՝ ըստ չափսերի:
- ՀՀ պաշտպանության նախարարությունը Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված 30.01.2019թ. 07.02.2019թ և 15.02.2019թ. նիստերին չի ապահովել նախարարության կողմից լիազորված որևէ ներկայացուցչի մասնակցությունը:

Այսպիսով, Բողոքներ քննող անձը գտնում է, որ Պայմանագրի միակողմանի լուծումն իրավաչափ չէ, քանի որ Պատվիրատուի կողմից «Մադել» ՍՊԸ-ին Պայմանագրի տեխնիկական բնութագրով սահմանված ժակետում չի տրամադրվել մատակարարման ենթակա ապրանքների քանակները՝ ըստ չափսերի:

Բողոքներ քննող անձը գտնում է նաև, որ N ԲՄԱՊՁԲ-7/32-1 ծածկագրով պայմանագրի գնման ժամանակացույց թիվ 1 հավելվածով սահմանված ապրանքի մատակարաման ժամկետը իրատեսական չէ, քանի որ Պայմանագիրը կնքվել է 15.06.2018թ., իսկ Պայմանագրի տեխնիկական բնութագրով սահմանվել է, որ մատակարարվող վերնաշապիկների չափսերի քանակները պետք է տրամադրվեն մատակարարումից առվազն երկու ամիս առաջ, մինչդեռ Պայմանագրի գնման ժամանակացույցով վերնաշապիկների մատակարաման ժամկետ է սահմանվել 2018թ. հուլիս ամիսը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Բողոքներ քննող անձը գտնում է, որ «ՄԱԴԷԼ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 25.01.2019թ. թիվ 27/26-3/997-19 գրությամբ «ՄԱԴԷԼ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ**